

«ՄԽԻԹԱՐ ՍԵՐԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ. ՀԱՅԱՑՔ ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ ԷՊՈՍԻՆ

ՍՈՎՈՐՈՂ՝ ԿԱՐԻՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԴԱՍԱՐԱՆ՝ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ, 12.1

ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԻԵՏ ՍԻՄՈՆՅԱՆ

Բովանդակություն.

- Թեմայի ընտրությունը
- Ներածություն
- Կրոնների արտահայտումը էպոսում
- Հեթանոսության արտահայտությունը էպոսում
- Ջրի պաշտամունք
- Կրակի պաշտամունք
- Կանանց դերը էպոսում
- Էպոսի տարբեր պատումները և մշակումները
- Վերջաբան
- Աղբյուրներ

Թեմայի ընտրությունը

Որպես հետազոտական աշխատանք ընտրել եմ հենց այս թեման, քանի որ ըստ իս՝ «Սասնա ծռեր» էպոսը մեր մշակույթի ու պատմության կարևոր մասն է կազմում, և ես երկու տեսանկյուններից էլ այն շատ եմ կարևորում: Էպոսում ներկայացված են Սասնա ժողովրդի ապրելակերպը, սովորույթները և հավատքը ներկայացնող դրվագներ, մեզ ու մեր նախնիներին բնորոշ հատկանիշներ: Ներկայացված են դարերի ընթացքում մեր մաքառումները թշնամու դեմ, հավատքի կարևորումը, կնոջ դերը, հայ ժողովրդին հատուկ բնավորության գծեր և այլն:

Մյուս կողմից՝ փորձեցի անդրադառնալ այնպիսի մի թեմայի, որի շուրջ կարող եմ անձանձիբ աշխատել՝ ձեռքիս տակ ունենալով գրական շատ աղբյուրներ, հետազոտություններ, վերլուծություններ, ուսումնասիրություններ:

Կարծում եմ՝ էպոսի ամբողջական հետազոտությունը բավականին ծավալուն աշխատանք է պահանջում, ուստի որոշեցի մի քանի ուղղություն առանձնացնել և դրանց մասին իմ տեսանկյունը ներկայացնել, որպեսզի էլ ավելի հետաքրքիր ստացվի աշխատանքս: Ըստ իս՝ էպոսում մեծ նշանակություն ունի կրոնը, նաև հեթանոսության արտահայտումը, կռապաշտության ներկայացումը: Կան մի շարք նշանավոր կանանց կերպարներ, որոնք մեծ դեր են խաղում էպոսում: Շատ են մշակութային սովորությունները, չափազանցությունները, որոնք էպոսը դարձնում են շատ ավելի անհավանական, յուրահատուկ, հեքիաթային և այլն:

Ներածություն

Ազգային էպոսը էպիկական բովանդակությամբ էպիկական ժանրի բանահյուսության կամ գրականության գործ է, որը ավանդաբար ներկայացնում կամ արտացոլում է որևէ ազգի մշակութային կամ ինքնաձանաչողական ոգին: Ազգային էպոսների մեջ հաճախ նկարագրվում է տվյալ ազգային էթնոսի ծագման և զարգացման պատմությունը, կամ պարզապես պատմության մի մասը, դրա կարևոր դրվագները և այլ ազգային խորհրդանշանների ծագման կամ ընդունման պատմությունը:¹ Ինչպես, օրինակ՝ մեր ազգային էպոսում ներկայացվում են հայերին բնորոշ սովորույթները, ազգային գծերը, կրոնի դերը, կենցաղային իրավիճակները, ինչպես նաև թշնամու հետ ունեցած մեր հարաբերությունները:

¹ Վիքիպեդիա Ազատ Հանրագիտարան. էպոս

Իսկ ի՞նչ է բանահյուսությունը: Այն այս կամ այն ժողովրդի կերտած բանավոր ստեղծագործությունների ամբողջությունն է: Բանահյուսության մեջ ժողովուրդն արտացոլել է իր պատմության առավել նշանավոր դեպքերը, ձգտումներն ու իդեալները:² Ժողովրդական բանահյուսության երկերը ստեղծվել ու դարերով պահպանվել են բանավոր, ինչպես «Սասնա ծռերն» է: Եվրոպական առաջավոր երկրների բանագիտական մտքի ազդեցությամբ 19-րդ դ. կեսերին հայ մտավորականությունը ևս կարևորեց մեր ժողովրդի բանավոր ավանդության տարբեր ժանրերի գրառման, հրատարակման և ուսումնասիրման անհրաժեշտությունը: Հայ ժողովրդական բանահյուսության հավաքման և հետազոտման գործընթացը սկզբնավորվեց Գ. Սրվանձտյանցի «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» (1874 թ.) աշխատանքով, որը առաջ բերեց բանահավաքչական մեծ շարժում:³

«Սասնա ծռեր» էպոսն ունի ավելի քան 1000-ամյա պատմություն՝ ստեղծվելով դեռևս 8-10-րդ դարերում, անցնելով սերնդեսերունդ, բերանացի պատմվելով և պահպանվելով՝ այն այսօր հասանելի է նաև մեզ, որն ընթերցելով բացահայտում ենք մեր մշակույթի առանձնահատուկ մի մասը: Մեծ հայագետ Մանուկ Աբեղյանի դիպուկ բնորոշմամբ. էպոսը տվյալ ժողովրդի ապրած կյանքի «բանաստեղծական պատմությունն է կամ պատմական բանաստեղծությունը»:⁴

Ամեն ժողովուրդ ունի իր էպոսը, ինչպես հունական <<Ոդիսականը>>, հնդկական <<Մահաբհարաթան>>, պարսկական <<Շահնամեն>> և այլն: Մեր ազգային էպոսն այսօր սիրված ընթերցանության նյութ է, նաև մեր էպոսագետների, գրականագետների կողմից ուսումնասիրվող գրականություն է: Ունի նաև մի շարք մշակումներ:

«Սասնա ծռերի» գրական մշակումները սկսվել են դեռևս 1890-ական թվականներից, սակայն Դավթի ճյուղի լավագույն մշակումը համարվում է Հովհաննես Թումանյանինը («Սասունցի Դավիթ», 1903 թ.): Փոքր Մհերի ճյուղը բանաստեղծական մշակման են ենթարկել ռուս բանաստեղծ Ա.Կուլեբյակինը («Մհերի դուռ», Թիֆլիս, 1916 թ.) և Ավետիք Իսահակյանը («Սասնան Մհեր», 1922 թ.): Դավթի ճյուղը մշակել է նաև Եղիշե Չարենցը («Սասունցի Դավիթը», 1933 թ.) և ուրիշներ: Էպոսի ամբողջական, մշակված տարբերակը 1939 թվականին թարգմանվել է ռուսերեն: Համահավաք բնագիրը թարգմանվել է ֆրանսերեն, չինարեն, անգլերեն:

1938-1939 թվականներին «Սասնա ծռերի» 1000-ամյա հոբելյանի առթիվ մինչ այդ գրառված 60-ից ավելի պատումների հիման վրա, Ս. Աբեղյանի, Գ. Աբովի, Ա. Ղանալանյանի խմբագրությամբ հյուսվել-կազմվել է մեկ միասնական համահավաք բնագիր («Սասունցի Դավիթ», 1939 թ.):

² Վիքիպեդիա Ազատ Հանրագիտարան. Բանահյուսություն

³ Բանասիրություն

⁴ «Ի՛նչ է, ո՞վ է» հանրագիտարան, «Սասունցի Դավիթ»

Հայ ազգային էպոսը, որպես մշակութային կոթող, ապահովում է իր պատվավոր և մնայուն տեղը հայերի մշակութային և հոգևոր կյանքում: Այս տեսանկյունից շատ կարևոր է մեր էպոսի գրաված առաջնային տեղը հայ մշակույթի մեջ, որով էլ առանձնանում ենք աշխարհի շատ ժողովուրդներից: Մշակութային մակարդակում էպոսի գլխավոր հերոսները ձեռք են բերում նոր որակներ, որոնք տիպական են միայն տվյալ ազգին: ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխամասային գրասենյակում՝ Փարիզում, որտեղ տեղի է ունեցել ոչ նյութական մշակույթի պահպանմանը նվիրված միջկառավարական կոմիտե, էպոսը, կազմելով դրա մի մասը, որպես ոչ նյութական մշակույթի արժեք՝ ներառվել է այդ ցանկում:⁵

Էպոսում կարևորվում է պետականության ստեղծումը որպես երազանք: Կարծում եմ, որ դասական բոլոր էպոսներն էլ իրենց առջև դնում են պետականության խնդիր: Պետականությունը ժողովրդի ամենակարևոր ձեռքբերումն է, նրա ինքնության հաստատման կարևոր գրավականը, և չի կարող էպոսներում իր արտահայտումը չունենալ: Պետականության գաղափարը կա բանահյուսությամբ մեզ հասած մեր շատ պատումներում՝ սկսած <<Հայկ ու Բելից>>: Ինչպես էպոսագետ Արուսյակ Սահակյանն է ասում, պատմագրությամբ գրված մեր բոլոր վեպերում, նույնիսկ մեր միակ հոգևոր վեպում (Գրիգոր Լուսավորիչ, Ագաթանգեղոս և Տրդատ Մեծ), պետության մասին էր խոսվում, քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու մասին է խոսվում: Մեր գրականագետները բանահյուսական մի մեծ շերտ ներկայացնում են որպես առասպելներ՝ միֆ: Սակայն ըստ էպոսագետ Արուսյակ Սահակյանի՝ առասպելը բարդագույն աստղագիտական գիտելիքներ է իր մեջ ներառում, այլաբանական մի ամբողջ համակարգի արտահայտություն է:⁶

Կրոնների արտահայտումը էպոսում

Կրոնի դերը մեծ է հայկական էպոսում, և հատկանշական է այն, որ որքան էլ մեր հերոսները ընդունում էին քրիստոնեությունը (չէ՞ որ մեր ժողովուրդը խաչապաշտ էր՝ ինչպես նշված էր էպոսում), էպոսում առկա են հեթանոսության պահպանված ընկալումներ և արտացոլումներ: Հետաքրքիր է նաև ժողովրդի ընկալումը՝ կուռքերի հզորության հետ կապված: Այս ամենը ես մանրամասն ներկայացնում եմ իմ աշխատանքում՝ բերելով համապատասխան օրինակներ, մի շարք մեջբերումներ:

Հեթանոսության արտահայտությունը էպոսում

Ջրի պաշտամունք

⁵ Էպոսը որպես ոչ նյութական մշակութային ժառանգություն

⁶ «Մասնա ծոերը» պետականության մոդել. Տեսանյութ

Բազմիցս ընթերցելով Էպոսը՝ նկատել եմ մի շարք փաստեր, որոնք ինքս կապում եմ հեթանոսության հետ: Մկսենք ամենաառաջին կերպարներից: Հայկական դիցաբանության մեջ Ծովինարը՝ Նար, Նուրի, Էդել է ջրի, ծովի և անձրևի աստվածուհին:⁷ Գլխավոր կին կերպարներից մեկն անվանված է Ծովինար: Հետևելով Էպոսի կերպարի՝ Ծովինարի կերպարի զարգացումներին, կարելի է նկատել, որ նրա հետ են կապվում ջրի պաշտամունքի հետ առնչություն ունեցող մի շարք այլ փաստեր ևս: Օրինակ՝ այն հատվածը, երբ Ծովինարը ծարավելով՝ Աստծուց աղբյուր է խնդրում, և Աստծո հրամանով ծովը բացվում է, ու նա ջուր է խմում, որից էլ հղիանում է.

Ինքն իր շորեր էհան, գնաց էդ աղբուր,

Բուռ էտու էդ անմահական աղբըրի մեջ,

Մի բուռ լիք ջուր խմեց,

Մեկ էլ՝ մի բուռ կիսատ:

Աղբուրըն ցամաքավ:

Էդ երկու բուռ ջրից հղացավ:⁸

Ծովինարի ջրից հղիանալը խոսում է ջրի ամենագորության մասին ժողովրդի մեջ պահպանված ընկալման մասին: Էպոսի երկու հզոր կերպարները՝ Սանասարն ու Բաղդասարը, որոնցից ծնունդ են առնում մյուս հերոսները, ջրածին են: Քանի որ Էպոսում պատահականություններ չեն լինում, ամեն ինչ կապվում է ժողովրդի ընկալումների, մտածողության, հոգեբանության, ազգային տարբեր խորության շերտերի հետ, հետևաբար չէին կարող նրա դյուցազունների սկզբնաղբյուր հերոսները պատահաբար ջրից ծնունդ առնել: Պարզ է, որ էստեղ գործում է ժողովրդի ջրի աստվածության հետ կապվող հավատալիքը:

Ջրի պաշտամունքի հետ կապված մի այլ օրինակ ևս: Սանասարը որոշում է մտնել ծովը, որտեղ քնում և երազ է տեսնում: Մարիամ Աստվածածինը նրան ուղղորդում է ու ցույց է տալիս Քուռկիկ Ջալալու տեղը: Քուռկիկ Ջալալին ևս ծովային էր: Ջրի ուժի ու գորության հիշողությունը այստեղ ևս առկա է:

Տեսավ Ծովային ձին. Քուռկիկ Ջալալին,

Էնտեղ կապուկ, թամբ սադաֆին վերան պատրաստ...

Մեկ այլ հատված՝ ջրի պաշտամունքը փաստող, որը նույնպես կապվում է Սանասարի հետ, երբ նա ծովն է մտնում.

⁷ Ջրի, ծովի, անձրևի աստվածուհին հայ դիցաբանության մեջ

⁸ «Սասնա Ծոեր», ճյուղ առաջին

Էկեղեցուց էլավ դուրս,
Գնաց, մտավ էն դարբասի հավուգ, լողացավ՝
Աղբրրի ջուր խմեց, քնեց.
Քնեց մի քիչ,աստծու շնորհք առավ.
Ջոջացավ, գորացավ,կտրրճացավ,
Լցվավ, դարձավ հրեղեն:

Սանասարը լողավազանում լողացավ, աղբյուրի ջուրը խմեց, մեծացավ, հզորացավ,
դարձավ կտրիճ:

Էպոսի մի այլ հատվածում Սանասարն ու Բաղդասարը իրենց տուն-ամրոցը սարքում են
մի բարակ առվի ակունքին, որի հզորությունն ու ուժը նրանց զարմացրել էր.

Տեսան, որ մեկ մեծ գետ կը գար, կ'անցներ էնտեղ.
Ու մեկ բարակ առու մի էնդիեն՝
Կ'իջներ, կը գար բարձր սարերից,
Կը զարկեր մեջ էդ գետին,
Ու կը կտրեր գեղ գետ,
Ու կը շերտեր ջուրի մեջտեղ,
Ապա կը խառնըվեր մեջ էդ գետին ու կ'երթար:

Ահա ինչպես են եղբայրները բնորոշում այդ ջուրը.

— Էդ ջուր ազնանցորդու ջուր է.
Ով որ եղոր ական ջուրըն խմե,
Էդպես կտրիճ կըլնի,
Էնոր մեջքըն գետին տվող չի'նի:
— Ով որ գեղա պստիկ ջրի ակըն գտնե,
Ու գիր տունն էլ շինե վեր էդ ջրին,
Էնոր զավակն էլ որ ըլնի,
Էդպես գորեղ կ'ըլնի,
Էնոր մոտեն ազնանցորդի կ'ելնի.
Էնոր տղեք կտրիճ կ'ըլնին:

Կրակի պաշտամունք

Սանասարին և Բաղդասարին կնքում են թոնրի վրա.

Մեքիսեթ քահանան էլավ,
Թոնդրան վերա կնքեց.
Ջոջ տղի անուն էդիր Սանասար,
Պստիկին՝ էդիր Բաղդասար:

Ինչո՞ւ թոնրի վրա: Գիտենք, որ ըստ հին հավատալիքների կրակը համարվում է սրբագործող: Եվ երևի թե պատահական չէ, որ նորածիններին հենց թոնրի վրա են կնքում: Կարծում եմ, սա էլ է համարվում կրակի պաշտամունքից եկած ծեսի խորհրդանիշ:

Երբ Սանասարը, հայտնվելով ծովում, լողանում է ջրավազանում, հզորանում, դառնում է հզոր, հրեղեն:

Չոչացավ, գորացավ, կտրրնացավ,
Լցվավ, դարձավ հրեղեն:

Ահա ձիու նկարագրությունը, որտեղ *կրակե* մակդիրը ցույց է տալիս ձիու հզորությունը.

Ո՛րդի, էնոր ձին էլ կրակե ձի էր.
Թռավ, անցավ քաղքի մե՛ջ:

Դավիթը պարզում է, որ իր հոր գերեզմանից կարմիր-կանաչ բոց է դուրս գալիս: Ինչո՞ւ բոց: Ինչո՞ւ է կրակը կապվում Աստվածածին եկեղեցու հետ: Միերի գերեզմանից կարմիր-կանաչ բոց է դուրս գալիս: Կարծում եմ, այս տեսարանի առկայությունն էլ խորհրդանշում է կրակի հետ կապված հին հավատալիքը:

Դավիթ իրիշկեց էն կրակ, էլավ գնաց վեր:
Գնաց, տեսավ կո, գերեզման մի կա էնտեղ
Կանաչ-կարմիր բոցն էդ գերեզմանն էն կելնի:
Լուս կամար գերեզմանի վերան կանգնե:
Դավիթ գնաց մոտ, ձեռ էտու բոցին—ձեռ չ'երեց:
Հո՛ղ թալեց վերան—չը հանգավ:
Նոր մեջ իր խելքին մտածեց.
«Է՛ն, ինչ Մարութա բարձր Աստվածածին կ'ասեն՝
Սա է»:

Կրոնի հետ կապված մեկ այլ նկատառում է նաև խաչապաշտ և կռապաշտ ժողովրդի տարբերությունը, հավատքի ուժը և այլն: Ճիշտ է, խաչապաշտ ժողովուրդը չէր հետևում կուռքերի գործոթյանը, բայց նաև չէր անտեսում այն, քանի որ նրանք հավատում էին դրանց ուժին.

Բաղդասար քնուկ էր մեկ գիշեր.

Մեկ էլ տեսնի, ի՞նչ տեսնի լավ:

— Չոջ Կուռք էղավ իծու օրինակ,

Էկավ գլխու վերև, մրկմըկաց,

Մինչի լուս չթողեց, որ էն քներ, սթերե:⁹

Քո Չոջ Կուռք շատ գորավոր կուռք է,

⁹ «Մասնա Ծոեր», ճյուղ առաջին

Գիշերն էլ չէր թողնե, որ մենք էնտեղ սըթըրվինք, - ասում էին Սանասարն ու Բաղդասարը Խալիֆային:

Իմիջիայլոց, այս միտքը համարում եմ հետազոտությանս ամենահետաքրքիր կետերից մեկը, քանի որ ինձ երկար մտածելու տեղիք տվեց այն, ինչպես նաև փնտրելու և նոր օրինակներ գտնելու:

Էպոսում կան մի շարք քրիստոնեական հավատքի դրսևորումներ, որոնցից մեկն էլ երևում է հենց սկզբում, երբ Ծովինարի և Խալիֆայի ամուսնությանը խանգարում էր կրոնը՝ տարբեր հավատալիքները, սակայն Ծովինարը համաձայնեց ամուսնանալ վերջինիս հետ՝ ետ չմնալով իր կրոնից.

-Հայր՝իկ, դու էլ մեկ քահան դիր հետ ինձ,

Որ առավոտ, իրիկուն ժամ ասի,

Ես իմ աղոթք անեմ, մնամ մեր օրենքով:

Քրիստոնեական հավատքի դրսևորման ցայտուն օրինակն է նաև Խաչ Պատերազմին, որը միշտ նշանավոր կերպարների հետ էր դժվար պահերին, ինչպիսիք էին Սանասար-Բաղդասարը, Մեծ Մհերը, Սասունցի Դավիթը և այլն:¹⁰ Էպոսի հատվածներից մեկում Դավիթը պատերազմ գնալիս Ձենով Հովանից խնդրում է իր հոր Խաչ Պատերազմին, որն, ըստ իրենց՝ ուժ էր հաղորդում: Մինչ պառավի՝ իրեն պատմելը, նա ոչինչ չգիտեր դրանց մասին, իսկ հետո այն պահանջեց իր հորեղբորից.

Ես կուզեմ քենե իմ հոր Խա՛չ Պատերազմին.

Կըտասս տուր խաթրով —

Չես իտա՛ կը կայնեմ, գոռովե՛ն կառնեմ:

Հեթանոսության, ինչպես նաև ջրի պաշտամունքի մեկ այլ օրինակ է էպոսի այն հատվածը, որտեղ Սանասարն ու Բաղդասարը կառուցում են Սասնա բերդը: Կրկին նկարագրվում է ջրի հզորության մասին (թե ինչպես էր փոքրիկ առուն կտրում գետը), իսկ նրանք էլ իրենց ամրոցը որոշում են կառուցել հենց ջրի կողքին.

Տեսան, որ մեկ մեծ գետ կը գար, կ'անցներ էնտեղ.

Ու մեկ բարակ առու մի էնդիեն՝

Կ'իջներ, կը գար բարձր սարերից,

Կը զարկեր մեջ էդ գետին,

Ու կը կտրեր գեղ գետ,

¹⁰ «Սասնա ծռեր» դյուցազներգության ուսուցումը ավանդական և ժամանակակից մեթոդների համադրմամբ, էջ 7

Ու կը շերտեր չուրի մեջտեղ,

Ապա կը խառնըվեր մեջ էդ գետին ու կ'երթար:

Կարևոր են նաև Միերների կերպարները: Իմ կարծիքով, Մեծ և Փոքր Միերները կապվում են Միիր աստծո հետ: Էպոսում դա վառ արտահայտվում է Փոքր Միերի կերպարի մեջ, ով համարվում էր էպոս մտած Միիր արեգակը:¹¹ Լուսնային և արեգակնային հասկանիչներով և գուշակության ու կախարհության շնորհներով էին օժտված նաև էպոսի կանայք՝ Դեղձուն Ծամբ, Խանդուրը և Գոհարը: Սանասարը և Բաղդասարը կապվում են հայ առասպելաբանության մեջ ամպրոպային հերոսների հետ, որոնք, կովելով ջրի ակունքը փակող հրեշի հետ, սպանում են նրան, և ազատում արեգակի աղջկան՝ այս դեպքում Դեղձուն Ծամին:¹²

Եվ մինչ այսօր էլ՝ չնայած նրան, որ ջրի և կրակի պաշտամունքը թվում է՝ մնացել է խոր անցյալում, մենք՝ քրիստոնյաներս, հաճախ ենք հանդիպում այդ պաշտամունքը հիշեցնող դեպքերի, որոնցից շատերը կարող են համարվել անգամ սնահավատություն: Օրինակ՝ երբ վատ երազ տեսնելով ծորակի դիմաց պատմում ենք այն այն կամ երեխայի ծնվելուց քառասուն օր հետո քառասուն անգամ ջուր ենք լցնում նրա գլխին: Կամ տանից դուրս եկող մարդու ետևից ջուր ենք լցնում՝ նրան այդպիսով հաջողություն

ցանկանալով:

Իհարկե, կան նաև քրիստոնեական տոներ, որոնց հիմքում ընկած են հեթանոսական շրջաններից եկած տարբեր պաշտամունքներ: Իհարկե դրանք հիմա այլ մեկնաբանություն ունեն, բայց միևնույն է, արմատը, որից դրանք ծագում են, ակնհայտ է: Կապված ջրի, կրակի գործության, դրանց պաշտամունքի հետ հիշենք Վարդավառը, Տրնդեզը, Ծաղկազարդը և այլն: Դրանցից գրեթե բոլորը կապված են որևէ պաշտամունքի հետ, որոնցից յուրաքանչյուրն էլ ունի իր նշանակությունը, պատմությունը՝ կապված տարբեր աստվածների, աստվածուհիների հետ:

Կանանց դերը էպոսում

Ուշադիր կարդալով էպոսը՝ կարելի է նկատել, որ հակառակ կանանց նկատմամբ միջնադարյան քրիստոնեական աշխարհայեցողության ժխտական վերաբերմունքին՝ նրանում շատ մեծ նշանակություն ունի կանանց դերը:¹³ Գլխավոր հերոսուհիները օժտված են առանձնահատուկ գծերով՝ գեղեցիկ են, խոհեմ, զգայուն և գրեթե նույնքան քաջ, որքան տղամարդիկ էին էպոսում: Դրա ցայտուն օրինակն է էպոսում արտահայտված մտքերից մեկը. «առյուծն՝ առյուծ է, էղնի՝ էգ, թե որձ»: Հայ իրականության մեջ սովորաբար տղամարդիկ են գնում զոհողությունների հանուն

¹¹ «Մասնա ծոեր» էպոսի ուսուցման ժամանակագրությունը դպրոցում, Էջ 13

¹² Էպոսն ու հեթանոսությունը

¹³ «Մասնա ծոեր» էպոսը. forum

իրենց ընտանիքի կամ նույնիսկ հայրենիքի, սակայն էպոսում կանայք նույնչափ անհանգստանում և անում էին ամեն հնարավոր բան իրենց երկրի և տան համար:

Էպոսի ամենաառաջին կին կերպարը Ծովինարն է, ով էական դեր ունի էպոսում և գրեթե մինչ դրա ավարտը ուղեկցում է բոլոր հերոսներին: Հայ դիցաբանության մեջ Ծովինարը եղել է ջրի, ծովի և անձրևի աստվածուհին: Դեռ շատ վաղուց, հայ իրականության մեջ երաշտի ժամանակ մարդիկ երգելով ծիսական երգեր իրենց աղոթքն ու մաղթանքներն էին մղում ջրի աստվածուհուն, նույն ինքը՝ Ծովինարին: Հայոց ավանդություններում նա հաճախ հանդես է եկել իր հրեղեն ձիով, նրան համարում էին երկնքի քմահաճ տիրուհի, ով երկրի վրա առաջացնում էր բարեբեր անձրև:¹⁴

Էպոսում Ծովինարը հղիանում է՝ ծարաված ջուր խմելով կաթնաղբյուրից, երբ Աստծո հրամանով բացվում է ծովը: Հենց նրանից էլ սկիզբ է առնում Սասնա տոհմը՝ այն «ծուռ» քաջերը, որոնք հետագայում կովի դաշտում դառնում են անպարտելի մարտիկներ՝ անկախ նրանից՝ կին են, թե տղամարդ: Ծովինարը անձնագոհ կերպար էր, քանի որ դեմ գնալով իր կրոնի պահանջին, ամուսնացավ այլակրոն Խալիֆայի հետ՝ մինչև վերջ հավատարիմ մնալով քրիստոնեությանը: Սովորաբար նման անձնագոհության գնում է տղամարդը, քանի որ հանուն հայրենիքի ամեն ինչ, նույնիսկ կյանքը գոհելը նրան է բնորոշ:

Առաջին ճյուղում Ծովինարն ու Դեղձուն Ծամը դիցաբանական տեսանկյունից լրացնում են միմյանց՝ որպես ջրի և արևի համապատասխան տարերքի մարմնացումներ: Հատկապես, այս կերպարի դիցաբանական ծագման մասին է խոսում վերջինիս անունը՝ Քառսուն-Ճյուղ Ծամ, որը կապվում է առասպելական մի քանի կերպարներին բնորոշ ծամերի առասպելաբանության հետ: Օրինակ՝ վրացական ավանդության մեջ Դալի դիցուհին իր ծամերով հերոսին գամում է քարին, հայ առասպելության մեջ Շամիրամն իր ծամերով քար է նետում և այլն:¹⁵ Ըստ Մանուկ Աբեղյանի՝ Դեղձուն Ծամ նշանակում է դեղձանամազ, խարտյաշ: Բացի էպոսում ունեցած իր դերից՝ նա նաև առասպելական կերպար է, ով «հանդես է գալիս իբրև ամպրոպային վիշապից գերված մի «ակն ու արեգակ» աղջիկ»:

Համաձայն հայերի մեջ ընդունված սովորության՝ տղամարդիկ են որևէ քայլ ձեռնարկում կնոջը հասնելու համար, սակայն էպոսում կա դրան հակադիր երևույթ, երբ կանայք են նախաձեռնող դառնում:

Դեղձուն Ծամը, լսելով Սանասարի արիության մասին, ինքն է փորձում անել ամեն հնարավոր բան, որպեսզի իր գեղեցկությամբ և հմայքով գրավի նրան՝ փորձելով նամակի միջոցով իր մոտ կանչել վերջինիս: Կարծում են՝ Քառսուն-Ճյուղ Ծամի

¹⁴ Ջրի, ծովի, անձրևի աստվածուհին հայ դիցաբանության մեջ

¹⁵ Քառսուն-Ճյուղ Ծամ Դեղձունի կերպարը

կերպարի մեջ խտացված ներկայացվել է մայրիշխանության ժամանակների տան տիրուհուն բնորոշ որոշ գծեր.

Ես Պղընձե քաղքի թագավորի աղջիկն եմ:

Իմ սի՛րտ՝ քանց էսա դատարկ կուժ սար-սո՛ւրբ է

Իմ գլուխ՝ քանց էսա լիք կուժ լափ-լիքն է.

Աստրծու շնորհքով լցուկ եմ:

Շատեր էկած իմ վերա, ինձ ուզելու.

Քառսուն տեղե քառսո՛ւն մարդ է էկած,

Ես խոսք չեմ տվե, ես հա չեմ ասե.

Էրագով ըզքեզ տեսեր եմ, արի ինձի ա՛ռ.

Ինձի շա՛տ դուր կը գաս դու:

Սանասա՛ր տղա,

Էս թուղթ կը գրեմ քե՛զ համար.

Չուր ե՞րբ ես տի մնամ էստեղ քո ապով.

Գլուխ թացեր ես, չկնտես,

Արի, ինձի տար քեզ համար»:¹⁶

Այդպիսի համարձակ կերպար է նաև Խանդութ խանումը, ով լսելով Դավթի քաջության ու հերոսության մասին, գուսաններ է ուղարկում նրա մոտ՝ իր գովքն անելու.

— Գուսաններ,— ասաց,— կ’երթաք Սասուն.

Կը հարցուք Դավթի սենեկ,

Կ’երթաք, կը նստեք էնտեղ,

Դավթի առջև ինձի կը գովեք,

Որ էլնի, գա, ինձի առնի՛:

Թե հավնա՛վ ինձի, հավնա՛վ,

Թե չըհավնավ՝ գլուխ քար, էրես պատ,

Էն էլ ինձի պետք չի:

Նմանատիպ օրինակ է նաև այն, որ Մհերի՝ Մըսըր գնալուց հետո Արմաղանն է երկար տարիներ կառավարում Սասունը: Իսկ հետո չներելով Մհերի դավաճանությունը՝ միայն պայմանով, հանուն իր երկրի հեռանկարի է ընդունում նրան: Այս ամենից

¹⁶ «Սասնա ծռեր», ճյուղ առաջին

կարելի է ենթադրել, որ կանայք հավասարաչափ մտահոգվում էին երկրի վիճակի, ինչպես նաև այն կանգուն և հզոր պահելու մասին:

Էպոսի նկարագրություններում բավականին քիչ, սակայն խոսվում է նաև Դեղձուն Ծամի քրոջ մասին (անունն անգամ նշված չէ Էպոսում), ով ամուսնացավ Բաղդասարի հետ, և ում երկու եղբայրները փրկել էին վիշապի ձեռքից:

Սանասար ասաց.— Աղբեր, Էս Դեղձուն աղջիկ դո՛ւ առ;

Բաղդասար ասաց.— Չէ՛, ես զէն չեմ առնի.

Էնի երկու դիր քեզ բարև գրե.

Կռիվն էլ դո՛ւ արիր, դա տ՛առնես:

Ո՞վ է լսե. ո՞վ է տեսե,— ասաց.

Աղբեր գաղբոր նշանածն առնի:

Էս կ՛առնեմ իմ նշանած,

Զէն աղջիկ, որ վիշապից ազատեցինք:

Աղջիկներ պսակեցին,

ԸզԴեղձուն-Ծամ վեր Սանասարին,

Զէնոր քուրն էլ վեր Բաղդասարին:

Ոչ այդքան էական, սակայն իրենց դերն ունեն էպոսի երկու կին կերպարները՝ Սառյեն և Չմշկիկ Սուլթանը, որոնց ես համարում եմ բացասական կերպարներ, քանի որ նրանք Էպոսում բնութագրվում են իրենց նենգությամբ, չարությամբ, գոռոզամտությամբ, մեծամտությամբ և խորամանկությամբ: Կերպարներից առաջինը՝ Սառյեն, ամեն կերպ փորձում էր հրապուրել իր զարմիկին՝ Դավթին, սակայն վերջինս ամեն անգամ մերժում էր նրան, ասելով.

-Հրողբո՛ր կնիկ,

Դուն իմ մե՛րն ես, ես քո որդի՛ն...¹⁷

Միակ կինը, որ կարծես խորթ է թվում և մեզ է հասել աղոտ նկարագրությամբ, Չմշկիկ-Սուլթանն է: Կարծես նա հանդես է գալիս իբրև էպոսի մյուս հինգ կանացի կերպարների հակադրություն: Նրան բնորոշ էր չարությունը և ով էլ իր աղջկան փոխանցել էր այդ քինախնդրությունը Դավթի դեմ: Ժողովուրդը իր վերաբերմունքն է արտահայտել այս կերպարի նկամամբ.

¹⁷ «Սասնա ծռեր», ճյուղ երրորդ

Դառնանք, զօղորմին չը տանք
Չմշկիկ Սուլթանին,
Չը տանք օղորմի:

Ինչպես արդեն նշեցի, կան մի շարք հակադրություններ Չմշկիկի և մյուս կին կերպարների միջև: Այդ հակադրությունը երևում է նաև Դավթի դեմ նրա մենամարտի շարժառիթի դեպքում: Էպոսում նշված է, որ Խանդուրն ու Գոհարը նույնպես մենամարտել են: Սակայն ի տարբերություն նրանց, Չմշկիկ-Սուլթանը իր վրեժն էր ցանկանում լուծել: Վերջինիս մենամարտելու հրավերը Դավթին ոչ թե սիրած էակին փորձելն էր, այլ հետևանք էր վիրավորված հպարտության, անսահման խանդի, սիրած էակին իրեն վերադարձնելու՝ նույնիսկ նրա կյանքը խլելու միջոցով: Կարելի է նաև նկատել, որ միակ կինն է ամբողջ էպոսում (բացառությամբ խլաթցի պառավի), ով մահանում է ոչ թե սիրո, այլ աստելության հանգամանքներում (ընկնում է Քուռկիկ Ջալալու սմբակների տակ և ջախջախվում): Ինչպես նաև՝ օղորմիների շարքում չի տրվում Չմշկիկ-Սուլթանի անունը: Ըստ իս՝ նրան կարելի է համարել բացասական կերպար:¹⁸

Կարելի է նկատել նաև, որ էպոսում կնոջ կերպարը բավականին չափազանցված է: Մասնա տոհմի կանանցից շատերը բավականին քաջ էին, և այնքան, որ նույնիսկ կարողանում էին մենամարտել տղամարդու դեմ՝ հավասարը հավասարի պայմաններում: Օրինակ՝ Չմշկիկ Սուլթանը կովի է կանչում Դավթին՝ քաջ տեղյակ լինելով նրա ուժի և հզորության մասին:

Ասաց. — Դե՛հ, քո պատրաստություն տես,

Էլնենք մեյդան, կռվե՛նք:

Էն էլ ասաց. — Մեկ ժամ ժամանակ տալ,

Զիմ շորեր հագնեմ, զենքեր կապեմ, գամ:

Գոհարի ու Մհերի մենամարտից մի հատված.

Մհեր որ գուրգ թալեց, Գոհար վերուց.

Գոհար որ թալեց, Մհեր վերուց:

Մեկ մեկու չը կարցան հաղթեն:

Ինչպես նշեցի՝ սասնա քաջերը ընտրում են իրենց արժանի կանանց, ովքեր իրենց արիությամբ չեն զիջում իրենց: Ըստ իս՝ Արմաղանի (Մեծ Մհերի կինն է) և Գոհարի (Փոքր Մհերի կինն է) միջև կա մի փոքր նմանություն. խոսքը ամուսնուն հնազանդ լինելու մասին է: Ինչպես նաև՝ երկուսն էլ ինքնագոհողության են գնում, մեկը՝ հանուն նոր լույս աշխարհ եկող Դավթի, մյուսն էլ՝ իր հայրենիքի պաշտպանության համար:

¹⁸ «Մասնա ծոեր» էպոսը. forum

Մյուս նշանավոր կերպարը Իսմիլ Խաթունն է, ով բացասական դեր ուներ էպոսում, քանի որ խորամանկ էր: Ինձ համար ամենից հատկանշական հատվածը (կապված նրա կերպարի հետ) այն էր, որ իր խորամանկությամբ այնպես արեց, որ Մհերը գա իր մոտ՝ յոթ տարի խաբեությամբ պահելով վերջինիս: Ճիշտ է, սա կարող է դիտվել որպես բացասական արարք, սակայն սա այն փաստի ապացույցներից մեկն է, որ էպոսի կանայք հավասարապես հոգ էին տանում իրենց հայրենիքի մասին և փորձում ամեն գնով հզորացնել այն: Նույնն անում էր Իսմիլ Խաթունը՝ փորձելով հզորացնել իր հայրենին իր ազգի թշնամու միջոցով:

Հաջորդ կերպարը, ում մասին կուզեի խոսել, Արմաղանն է՝ Մեծ Մհերի կինը: «Արմաղանը» բացատրվում է հետևյալ կերպ՝ չքնադ, գեղեցիկ, ընծա, որը, ըստ իս՝ որոշ չափով բնորոշ էր էպոսի կին կերպարին և պատահական չէր ընտրված:¹⁹ Նախ, Արմաղանն օգնում էր Մհերին երկիրը կառավարելու հարցում: Եվ հետո, նա անձնագոհության գնաց՝ ներելով իր ամուսնուն, ով դավաճանել էր իրեն իրենց թշնամու՝ Մըսրա Մելիքի կնոջ հետ: Համաձայն էպոսի՝ Մհերը երկար տարիներ հետ չէր գալիս տուն՝ գտնվելով Իսմիլ Խաթունի մոտ, ով խաբեությամբ իր մոտ էր պահում Մեծ Մհերին: Արմաղանի անձնագոհությունը երևում է այն հատվածում, երբ հանուն Սասնա տոհմի շարունակության և երկրի կանգուն մնալուն ետ է ընդունում Մհերին, չնայած, համաձայն իր երդման՝ մոտ քառասուն տարի չէր ընդունելու նրան: Էպոսն ապացույցն է այն բանի, որ հայ կնոջը հատկանշական է անձնագոհությունը (լավագույն օրինակն են Արմաղանն ու Ծովինարը), և որքան էլ տղամարդը լինի տան գլխավորը, միևնույն է, կանայք էպոսում ունեցել են հավասար իրավունքներ և ուժ:²⁰

Էպոսի պատումները և մշակումները

Շատերիս է հայտնի, որ «Սասնա ծռեր» էպոսը ամբողջությամբ հրատարակել է Գարեգին Սրվանձոյանը, 1873-ին:²¹ Սակայն մինչ օրս՝ սիրվելով ժողովուրդների կողմից՝ թարգմանվել, ինչպես նաև ենթարկվել է մի շարք գրական մշակումների, իհարկե, մեծամասամբ հայ գրողների կողմից, սակայն այն գրի առնողների մեջ նշանավոր են նաև մի քանի օտարազգի գրողներ:

Էպոսի բուն նյութը բարբառով ավանդված մեզ հայտնի շուրջ 160 պատումներն են, դրանց հատվածները, որոնք գրավել են 1873 թվականից սկսած մինչ 1970-ական թվականների վերջը: Իսկ ի՞նչ է սա իրենից ներկայացնում: Պատումները էպոսի ասացողական տարբերակներն են, որոնք առաջանում են էպոսի տարածման, տեղայնացման, անհեղինակային, բանավոր գոյության ընթացքում: Էպոսի շուրջ 160 տարբերակները կարելի է դասակարգել ըստ 3 հիմնական տիպաբանական խմբի՝

¹⁹ Բացատրական բառարան

²⁰ Կնոջ կերպարը հայ գրականության մեջ, էջ 9

²¹ Գարեգին Սրվանձոյանը և էպոսը

ինչպես ընդունված է բանագիտության, էպոսագիտության մեջ՝ Մշո, Մոկաց և Սասնա պատումներ:²²

Մի փոքր խոսեմ կերպարային համակարգի մասին: Հիմնականում, Մոկաց և Մշո պատումներում տարբերությունն այն է, որ մի դեպքում մենք ունենք Քեռի Թորոսի կերպարը, մյուս դեպքում ավելի գործուն է Ձենով Հովանը: Ըստ համահավաք բնագրի՝ այս երկու կերպարները հավասարազոր են և հերոսների կողքին են գրեթե միշտ, հատկապես Քեռի Թորոսը, ով համարվում էր «Հավերժական քեռի» և էպոսի սկզբից մինչև վերջ պահպանում է իր գոյությունը: Ինչո՞ւ է Մշո ազգագրական պատումներում Քեռի Թորոսը պահպանվել: Ենթադրվում է, որ այնտեղ մայրիշխանական ինչ-որ նկատառումներ են եղել, ըստ այդմ՝ քեռու գիծը կարևոր է եղել, սակայն Հովանի դեպքում մի փոքր դժվար է կողմնորոշվելը, թե ինչու է հատկապես նրա կերպարը պահպանվել:²³

Մշո պատումները աչքի են ընկնում ավելի էպիկական, արձակ, մի փոքր ծանր, երկարաշունչ ոճով և հստակորեն տարբերվում են, մինչդեռ Մոկաց պատումներում ավելի շատ են հանդիպում երգային հատվածները: Սա նույնպես շատ դժվար է բացատրելը: Այս մասին էպոսագետ Սարգիս Հարությունյանը նշում է. «Մոկաց տարածաշրջանում երգային բանահյուսությունը առավել տարածված էր, իսկ Մշո տարածաշրջանում՝ այդքան էլ չէ»:

Իհարկե, շատ կարելի է խոսել էպոսի տարբեր պատումների մասին: Յուրաքանչյուր պատում ունի իր առանձնահատկությունը, հատկապես շատ հետաքրքիր են ուշ գրառված պատումները, որտեղ մենք տեսնում ենք գրավոր տարբեր տեքստերի ազդեցություններ, գաղափարական որոշակի անդրադարձներ, թե ինչպես է ժամանակի ընթացքում ունկնդիրը փոխվում, իսկ ասացողը գիտակցաբար կամ ոչ գիտակցաբար փոխում է պատումը: Եվ սրանով մենք կարող ենք տեսնել, որ իսկապես ժամանակի մեջ էպոսն անընդհատ փոփոխություններ է կրում:

Թեև անընդհատ ուսումնասիրվում է, կարծես թե ուսումնասիրություններ, մշակումներ շատ կան, բայց մենք էպոսը որպես այդպիսին չենք ճանաչում, որովհետև մենք չենք ճանաչում էպոսն ըստ նրա հիմնական նյութի, պատումների: Մենք էպոսին ծանոթանում ենք դպրոցում, կրտսեր դպրոցում՝ հիմնականում Հովհաննես Թումանյանի՝ էպոսի երրորդ ճյուղի մշակմամբ և մասամբ էլ 1937 թվականին կազմված համահավաք բնագրի միջոցով՝ մոտ 60 պատումների մշակման արդյունքում ստեղծված մի բնագրի:²⁴

Էպոսի գրական մշակումները սկսվել են դեռևս 1890-ական թվականներից, սակայն Դավթի ճյուղի լավագույն մշակումը համարվում է Հովհաննես Թումանյանինը («Սասունցի Դավիթ», 1903 թ.): Դեռ մանկուց բազմիցս ընթերցել եմ Թումանյանի

²² Հայկ Համբարձումյան: Էպոսի տարբեր պատումները. տեսակյութ

²³ Ըստ Հայկ Համբարձումյանի

²⁴ Հայկ Համբարձումյան

մշակումը, և քանի որ այն գրված էր արևելահայերենով, մանկության տարիներին այն ինձ էլ ավելի հարազատ և հասկանալի էր թվում, քան հենց ինքը՝ բնօրինակը: Եվ քանի որ Թումանյանը մշակել էր գրեթե միայն Դավթին վերաբերող հատվածները, իմ մեջ ստեղծվել էր այն կարծրատիպը, որ ողջ էպոսի գլխավոր և միակ նշանավոր կերպարը հենց Դավիթն է: Սակայն, ընթերցելով բնօրինակը՝ սիրելի դարձան շատ այլ կերպարներ, ինչպիսիք են՝ Սանասարը, Ծովինարը, Բաղդասարը, Մեծ Մհերը և այլն:

Փոքր Մհերի ճյուղը բանաստեղծական մշակման են ենթարկել ռուս բանաստեղծ Ա. Կուլեբյակինը («Մհերի դուռ», Թիֆլիս, 1916 թ.) և Ավետիք Իսահակյանը («Սասմա Մհեր», 1922 թ.):²⁵ Անկեղծ ասած, առաջին անգամ լսելով էպոսյան նրանց մշակումների մասին՝ ցուցաբերեցի մեծ հետաքրքրություն՝ ընթերցելու դրանք: Հիմնականում հետաքրքրեց այն փաստը, որ չնայած էպոսի համահավաք տեքստը կոչվում է Դավթի անունով, եղել են գրողներ, որ կարևորել են մյուս հերոսներին:

Կարդացի Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունը, և այն ինձ դուր եկավ: Սակայն բնօրինակի հետ համեմատելիս գտա մի շարք տարբերություններ, որոնք այնտեղ էլ ավելի լավ էին ներկայացված, քան Իսահակյանի վիպերգում: Նախ, բնօրինակն ինձ համար շատ ավելի արագ և հասկանալի էր ընթերցվում, քան Իսահակյանին էր, չնայած նրան, որ բնօրինակում դեպքերն էլ ավելի մանրամասն են ներկայացվում, և էլ ավելի շատ են ինձ համար անձանոթ բառերը: Սակայն, ես առանձնացրել եմ մի շարք յուրահատկություններ՝ կապված Իսահակյանի ոճի հետ՝ դուրս բերելով իմ կողմից ամենից շատ սիրված հատվածները, Մհերի խոսքերից ամենահետաքրքիրները և այլն:

Ինչպես բնօրինակում, այստեղ նույնպես կային շատ չափազանցություններ՝ էպոսի տղամարդկանց ուժի հետ կապված, այս դեպքում՝ Մհերի.

Մհեր լախտը քաշեց, զարկեց,

Ճեղքեց գանգը վագրի ահռիկ,

Միսը կերավ, մորթը ձգեց

Կուռ թիկունքին՝ գլխու վըրան՝

Գիշտ ու խալամ:

Ինչպես արդեն նշեցի՝ վիպերգի առանձնահատկություններից էր հեղինակի գրական ոճը, քանի որ Իսահակյանը բավականին գեղեցիկ էր շարադրել դեպքերը՝ մի փոքր բանաստեղծական ոճ մտցնելով ստեղծագործության մեջ: Ընթերցելով այն՝ որոշ հատվածներում նկատեցի գեղեցիկ հանգավորումներ և որոշեցի առանձնացնել դրանցից մի քանիսը.

Մհեր թեն դեռ տղա էր տկար,

²⁵ «Սասմա ծռեր» էպոսի ուսուցման ժամանակագրությունը դպրոցում, Էջ 12

Իրեն ուժի տեր Սասուն մարդ չկար:

Մահացավ Դավիթ՝ դյութազրն-առյուծ,

Մահացավ Խանդութ սրտի կսկրծուց,

Մնաց որբ-մանուկ, անհեր ու անմեր

Իրենց մեկ հատիկ գավակը՝ Մհեր:²⁶

Ըստ իս՝ հատկանշական է նաև հետևյալ հատվածը, որտեղ Մհերը դիմում էր բոլոր նրանց, ովքեր կյանքում գտնվում են ազատության մեջ.

Երանիկ ձեզ, վայրի հավքեր,

Դուք օրհնված եք, մարդն անիծած,

Ազատ, անպարտ,

Ընկերներով ու ախպոր պես

Կապրիք անհոգ ու սեր կանեք,

Ո՛չ արտատեր կրճանճնաք,

Ո՛չ հարկ ու կոռ, ո՛չ թագավոր,

Երանիկ ձեզ, վայրիկ հավքեր...

Էպոսի երրորդ ճյուղը մշակել է նաև Եղիշե Չարենցը («Սասունցի Դավիթը», 1933 թ.) և ուրիշներ:

Որպես ամփոփում կուզեի նշել, որ էպոսի ամբողջական, մշակված տարբերակը 1939 թվականին թարգմանվել է ռուսերեն: Համահավաք բնագիրը թարգմանվել է ֆրանսերեն, չինարեն, անգլերեն, գերմաներեն, վրացերեն, ադրբեջաներեն և այլ լեզուներով:²⁷

Վերջաբան

Ամփոփելով հետազոտական աշխատանքս՝ ուզում եմ նշել, որ էպոսն ինձ դարձավ էլ ավելի հոգեհարազատ, քան նախկինում էր, քանի որ այն ուսումնասիրեցի էլ ավելի մանրակրկիտ, վերլուծեցի էական դեր ունեցող կերպարները, կարդացի այլ մշակումներ, վերջապես լիարժեք ընկալեցի հեթանոսական արտահայտությունները քրիստոնեական էպոսում, առանձնացրի մի շարք չափազանցությունների, ջրի, կրակի

²⁶ «Սասնա Մհեր» վիպերգ

²⁷ Վիքիպեդիա Ազատ Հանրագիտարան. «Սասնա ծռեր»

պաշտամունքի վերաբերյալ հատվածներ և այլն: Այսինքն՝ էպոսի հետազոտությունն ինձ համար արդյունավետ էր, քանի որ ամիսներ շարունակ փնտրում և ընթերցում էի բավականին շատ և ծավալուն նյութեր աշխատանքս ավարտին հասցնելու համար:

Իհարկե, ինձ համար այն միշտ ունեցել է իր էական դերը մեր ժողովրդի պատմության մեջ, քանի որ այն արտահայտիչ կերպով ցույց է տալիս դարերի ընթացքում ձեռք բերված մեր սովորույթները, կրոնական հայացքները, թշնամու հետ ունեցած հարաբերությունները, նախկինում եղած ամուսնական հարաբերությունները և այլն: Չնայած, վերջին կետում ամեն բան չէր, որ համընկավ այժմյամ իրականության հետ. խոսքն աղջկա և տղայի սիրային հարաբերությունների մասին է: Ես մանրամասն գրի եմ առել մի շարք օրինակներ, որոնք ակնհայտ կերպով հակասում են մեր ժողովրդին բնորոշ հատկություններին և հավանաբար արտահայտությունն են մայրիշխանության ժամանակաշրջանի: Բերել եմ օրինակներ՝ Դեղձուն Ծամր ինքն է նամակ գրում և հորդորում Սանասարին, որ վերջինս գա ու ամուսնանա իր հետ: Խանդուրը ինքն է գուսաններ ուղարկում Դավթի մոտ՝ իրեն գովերգելու: Սովորաբար, տղամարդիկ են որևէ քայլ ձեռնարկում կնոջը հասնելու համար. դա մեր հայկական ավանդույթն է: Ես համարում եմ, որ մայրիշխանական ժամանակներին բնորոշ այսպիսի դրվագների հայտնագործումը ամբողջ աշխատանքիս ամենակարևոր ձեռքբերումներից է, քանի որ մինչ այդ երբևէ չէի էլ մտածել այս հատվածների շուրջ:

Ինձ հետաքրքրեցին նաև էպոսի պատումների վերաբերյալ հայ էպոսագետի՝ Արուսյակ Սահակյանի դիտարկումները, քանի որ նա մանրամասն խոսում էր դպրոցական դասագրքում ներառված թեմաների մասին՝ անդրադառնալով հենց Թումանյանի մշակմանը, պատմում էր պատումների տիպաբանական խմբերի մասին, խոսում Մշո պատումների առանձնահատկությունների մասին (որն ինձ լիովին անձանոթ էր) և այլն: Հետաքրքիր էր նաև էպոսի «Հավերժական քեռու» մասին նրա տեսակետը, որտեղ մեջ էր բերում մի շարք օրինակներ և դրվագներ:

Օգտագործված աղբյուրներ

[«Սասնա ծռեր» համահավաք բնագիր](#)

[Վիքիպեդիա Ազատ Հանրագիտարան. էպոս](#)

[Վիքիպեդիա Ազատ Հանրագիտարան. Բանահյուսություն](#)

[Բանահյուսություն](#)

[էպոսը որպես ոչ նյութական մշակութային ժառանգություն](#)

[«Սասնա ծռերը»՝ պետականության մոդել](#)

[Ջրի, ծովի, անձրևի աստվածուհին հայ դիցաբանության մեջ](#)

[«Սասնա ծռեր» դյուցազներգության ուսուցումը ավանդական և ժամանակակից մեթոդների համադրմամբ](#)

[«Սասնա ծռեր» էպոսի ուսուցման ժամանակագրությունը դպրոցում](#)

[Էպոսն ու հեթանոսությունը](#)

[«Սասնա ծռեր» էպոսը. forum](#)

[Քառսուն-ճուղ Ծամ Դեղձունի կերպարի դիցաբանական ակունքների և համաշխարհային առասպելաբանության մեջ նրա զուգորդների շուրջ](#)

[Հայերեն բացատրական բառարան](#)

[Կնոջ կերպարը հայ գրականության մեջ](#)

[Արեգակ-աղջկա խորհրդանիշը Քառսուն-ճուղ Ծամ Դեղձունի կերպարում](#)

[«Ի՞նչ է, ո՞վ է» հանրագիտարան](#)

[Գարեգին Սրվանձտյանը և էպոսը](#)

[«Սասնա ծռեր» էպոսի տարբեր պատումները. Հայկ Համբարձումյան](#)

[«Սասնա Մհեր» վիպերգ](#)

[Վիքիպեդիա Ազատ Հանրագիտարան. «Սասնա ծռեր»](#)